

Նատայա Ավետիսյան

ԱՐԱՄՈՒՍԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՏԱՂԵ ԳՏԱԾՈՆԵՐԸ

Քանայի բառեր. հնագիտական համալիր, Ուրարտու, պեղումներ, ամրոց, շերտ, մետաղե գտածոներ, մետալաք, շքասեղ, արձան:

Արամուս գյուղը և շրջակայքը աչքի են ընկնում հնագիտական ու պատմաճարտարապետական հուշարձաններով: Մեծաքանակ համալիրները վերաբերում են քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Դրանց մեջ առանձնանում է հատկապես Արամուս գյուղի տարածքի հսկայական ամրոց- բնակավայրը, որի պեղումներն սկսվել են դեռևս 1980-ական թվականներին Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախմբի ջանքերով:

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի և Ինսերուկի (Ավստրիա) Լեոպոլդ Ֆրանցի անվան համալսարանի մշակած ծրագրով գիտական ուսումնասիրություններն սկսեցին 2004թ-ի աշնանը:

Ավելի քան յոթանասուն մետր բարձրությամբ արևելքից-արևմուտք ձգվող բլրաշարի վրա վեր են խոյանում երբեմնի առեւելի ամրոցի ավերակները: Համալիրը բաղկացած է երկու՝ արևելյան և արևմտյան, խոշոր հատվածներից: Արևելյան մասում կառուցվել են վերին և ստորին միջնաբերդերը: Վերին միջնաբերդը հատակագծում ուղղանկյուն, 20-30 մ լայնքով, արևելքից արևմուտք ձգվող առանցքով, շուրջ մի քանի հա տարածք ընդգրկող, բազմաթիվ շինություններից կազմված ամրաշինական համակարգ է: Վերջինս օղակված է տասնյակների հասնող որմնահեցերից և աշտանակներից՝ բաղկացած 2,1-5,5 մ հաստությամբ պարսպապատերով: Պարսպապատերից մինչև 1,05 մ առաջ եկող որմնահեցերն ունեն 3-5-8 մ երկարություն: Տեղանքի որոշ հատվածներում ժայռերը հարթեցված են: Պարսպապատերի ամրությունն ապահովելու համար տեղ-տեղ կառուցվել են մեկից մինչև երեք շարք աստիճանաձև հենապատեր: Տեսանելի են վերին միջնաբերդը, արևելյան և արևմտյան ձակատային աշտարակներով ամրացված հզոր մուտքերը:

Ստորին միջնաբերդը վերը նկարագրված համալիրի օրգանական շարունակություն է: Զբաղեցնելով ավելի փոքր տարածություն՝ այն ուղղված է արևելքից արևմուտք, իսկ արևելյան հատվածում միաձուլվում է վերին միջնաբերդի մուտքին: Հատակագծում ձգված ուղղանկյան տեսքի ստորին միջնաբերդը շուրջ 20 մ ցածր է վերինից: Քննարկվող համալիրն ունի ավելի քան 30 մ լայնություն և վերին միջնաբերդի նման շրջապատված է տեղանքի գծագրությանը համապատասխան պարսպապատերով: Կրկնելով վերին միջնաբերդի կառուցողական մանրամասները՝ այն արևմտյան պարսպապատի կենտրոնական հատվածում ունի հզոր մուտք, որի հյուսիսային և հարավային հատվածներում կառուցվել են խոշոր անկյունային աշտարակներ:

Ամրոցի արևմտյան հատվածը համեմատաբար վատ է պահպանվել: Նշված տարածքը ընդգրկող այս համալիրը շրջափակված է բազալտե հզոր պարսպապատերով, որը հավանաբար «բակի» դեր է կատարել: Ամրոցի արևմտյան հատվածն ունի արևելք-արևմուտք ուղղվածություն և ստորին միջնաբերդից բաժանվում է 12 մ լայնությամբ հյուսիս-հարավ ձգվող ճանապարհով:

Ամրոցի տարածքը տեղանքի գծագրությանը համապատասխան բաղադրվում է դարավանդների, որոնք մասնավորապես միջնաբերդի հյուսիսային և հարավային թևերում իրարից հեռանում են 70-100 մ: Դարավանդներն իրենց հերթին տեղ-տեղ ամրացված են մինչև 2,5 մ բարձրությամբ պահպանված պարսպապատերով, որմնահեցերով և աշտարակներով: Նման դարավանդները բնորոշ են ուրարտական մի շարք ամրոցներին և բնակավայրերին՝ Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի և այլն:

Ուրարտական խոշոր ամրոցների նման Արամուսն ունեցել է քաղաքային հատված, որը սակայն չի պահպանվել:

Ամրոցի առանձին համալիրներն ու շինությունները մեկմեկու հաղորդակից են հարթ, աստիճանավոր թեքամուտքերով: Միջնաբերդի որոշ հատվածներում, պարսպապատերի մեջ, հստակ ընդգծվում են նաև պաշտպանական նկատառումներով «ծուղակի» սկզբունքով կառուցված մուտքեր, անցումներ, որոնք իրենց հատակագծային լուծումներով տիպական են Վանի թագավորության պաշտպանական համակարգի համար: Արամուսի ուրարտական ամրոցի կառուցման և թվագրման համար կարևոր նշանակություն ունի նրա հիմնադրման ժամանակագրության հետ կապված խնդիրը:

Տասը տողից կազմված էլառի արձանագրությունը ունի հետևյալ բովանդակությունը.

- /1/ Խալդի աստվածն արշավեց, իր զենքին
- /2/ հպատակեցրեց Էթիունի երկիրը:
- /3/ Խալդին ուժեղ է, Խալդիի զենքը ուժեղ է:
- /4/ Խալդյան զորությամբ արշավեց,
- /5/ Արգիշտին, Մենուայի որդին,
- /6/ նվաճեց Ուլուանի երկիրը`
- /7/ Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան
- /8/ մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին,
- /9/ թագավոր /է/ հզոր, թագավոր` Բիայնիլիի,
- /10/ տերը Տուշապա քաղաքի:

Արամուսի ուրարտական ամրոցից ոչ շատ հեռու տեղադրված մի այլ հնավայրի Դարանի ամրոցի դիմաց` նրա հարավային կողմում Արգիստի I-ի կողմից թողնված այս արձանագրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Ուրարտուի հզորագույն արքան գրավել է Ուլուանի երկիրը` Դարանի քաղաքը:

Ուրարտուի թագավորները, որպես կանոն, խոշոր երկրամասեր և քաղաքներ գրավելուց հետո կառուցում էին / եթե չէին վերակառուցում հինը/ նոր քաղաքներ, ամրոցներ, միջնաբերդեր:

Ահա նման պատկեր է ուրվագծվում Արամուսի ամրոցի ուսումնասիրության ժամանակ, որը հավանաբար նույն Դարանի քաղաքի բաղկացուցիչ մասն է եղել: Այս ամենը և հնագիտական նյութի վերլուծականը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հետագոտվող ուրարտական ժամանակաշրջանի ամրոցը կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դարով:

Պեղումներից գտնվել են մեծ քանակի հնագիտական գտածոներ` խեցեղեն, քարե իրեր, ոսկորից առարկաներ և այլն:

Արամուսի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև մետաղից ոչ մեծ քանակությամբ գտածոներ, որոնք հիմնականում վերաբերվում են Վանի թագավորության ժամանակաշրջանին և իրենց լայն զուգահեռներն ունեն Կարմիր բլուրի, Էրեբունու, Արգիշտիխինիլի, Այանիսի և այլ հուշարձանների նյութերում: Մետաղե իրերից առանձնանում են բրոնզից և երկաթից մատանիներն ու ականջօղերը, ապարանջանները, շքասեղաններն ու ֆիբուլները: Այս իրերը պատրաստված են բարձրորակ բրոնզից, կաղապարով և իրենց ոճական առանձնահատկություններով բնորոշ են ուրարտական կիրառական արվեստին:

Բրոնզից բաժանարարները, մատանիները, ականջօղերը բաժանվում են երկու խմբի` բարակ լարից մեկ պտույտով և տափակ մակերեսով երկու և ավելի ոլորապտույտ: Ականջօղերից մի քանիսը մակերեսներին ունեն գինդաձև հարդարանք: Հայտնաբերված ապարանջանները բարձրորակ բրոնզից են` հարթ մակերեսով: Որոշ գտածոներ կտրվածքում կլորավուն են, իսկ ծայրի մասերը տափակ, իրար մոտեցող: Ֆիբուլները պատրաստված են կաղապարով և ունեն աղեղնաձև մեջք, նրբին ասեղ` ոճավորված կենդանակերպ առյուծազուլխ ծայրեր: Մետաղե իրերի մեջ առանձնանում են բրոնզից և երկաթից նետասլաքները, դանակները, դաշույնները, նիզակի սայրերը:

Նետասլաքները կտրվածքում ռոմբաձև են, հարթ և խնձորաձև պղջուկներով: Նիզակները խողովակակոթառ են և պատկանում են կարճ սայրով նիզակների տիպին:

Գտնված դանակները երկաթից են, ունեն կլորացող և սրածայր շեղք, մեկը ունի տափակ մեջք:

Հատկապես հետաքրքիր են բրոնզե գոտիների բեկորները, որոնք եզրագծված են գծանախշ հորինվածքով: Դրանցից մեկը դրվագման եղանակով զարդարված է մեծ և փոքր ուղղահայաց խաչվող կլոր վարդյակներով: Դրանք պատկանում են ուրարտական միջին չափի գոտիների տիպին: Բացի վերոհիշյալը՝ հայտնաբերվել է բրոնզից ժապավենաձև թիթեղ, որը զարդարել է գավազանի փայտից կոթառը կամ էլ կահույքի որևիցե մաս:

Պեղված գտածոներից առանձնանում է երկաթից սկավառակաձև դեպի կենտրոնը սրացող թիթեղ-կոճակը: Հավանաբար այն գրահաշապիկի կամ էլ վահանի (ումբոն) մաս է:

2007 թ. պեղումների ընթացքում գտնվեց ցուլի արձանիկ՝ բարձրորակ բրոնզից: Այն ունի ընդգծված եղջյուրներ, կլորավուն գնդաձև աչքեր, կարճ պոչ, ձգված մարմին և համեմատաբար կարճ ոտքեր: Իր ոճական առանձնահատկություններով արձանիկը Վանի թագավորության քանդակագործության ինքնատիպ նմուշ է և թվագրվում է մ. թ. ա. 8-6-րդ դարերով: Այն նաև հետաքրքիր աղբյուրներ է գտնում, ինչպես կոլխիդակոբանյան մետաղի, փոքր Ասիական բրոնզի, այնպես էլ Լուրիստանյան արտեֆակտների հետ:

Արամուսի պեղումները բացառիկ հնարավորություն են ընձեռնում տվյալների համեմատական վերլուծությունների միջոցով վեր հանելու տարածաշրջանի պատմահնագիտական համապատկերը:

Наталья Аветисян, Металлические изделия обнаруженные в Арамусе. При раскопках в Арамусе было обнаружено немногочисленное количество изделий из металла, относящихся в большинстве своем к эпохе Ванского царства и имеющим параллели в материалах из Аргистихинили, Аяниса и других памятников. Среди металлических изделий можно выделить кольца, серьги, булавки и фибулы, изготовленные из бронзы и железа. Эти изделия изготовлены из высококачественной бронзы, отлиты в форме. Их стилистические особенности присущи урартскому прикладному искусству.

Ключевые слова: Арамус, раскопках, изделий, металл, эпохе Ванского царства, Аргистихинили, памятников, бронзы и железа.

Natalia Avetisyan, Metal finds from Aramus. During the excavations of Aramus also metal objects of small quantity have been found, which mainly relate to the period of the Van Kingdom and have parallels with the materials known from Karmir Blur, Erebuni, Argishtikhinili, Ayanis and other corresponding sites. Among the metal finds the bronze and iron rings as well as earrings, bracelets, pins and fibulae are to be mentioned. These objects are made in moulds by using high quality bronze. By their stylistic peculiarities they are typical to the Urartian applied art.

Key words: excavations, metal objects, period of the Van Kingdom, materials, bronze and iron rings, earrings, bracelets, pins and fibulae.